ԼԻՈՆԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՖԻԼԻՊ ԿԱՐԴԻՆԱԼ ԲԱՐԲԱՐԵՆԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

(27-31 մայիսի 2004 թ.)

Մայիսի 27-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով, հընգ-օրյա այցով Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Լիոնի արքեպիսկոպոս Ֆիլիպ Կարդինալ Բարբարենը, որին ընկերակցում էին Հայր Մաքսիմ Բորիշոնը և Հայր Մորիս Գարդը: Պատվիրակությանն ուղեկցում էր Արևմտյան Եվրոպայի Լիոնի շրջանի Հայրապետական պատվիրակի փոխանորդ Գերաշնորհ Տ. Նորվան եպս. Ջաքարյանը:

Մայիսի 27-ի վաղ առավոտյան, ժամը 00.15-ին, «Զվարթնոց» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին և Լիոնի եկեղեցական պատվիրակությանը դիմավորելու էին եկել Մայր Աթոռիս միաբաններ և թեմական առաջնորդներ Գերաշնորհ Տ. Դավիթ արքեպս. Սահակյանը, Մայր Աթոռի Հրատարակչական մարմնի տնօրեն Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը, Կոտայքի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանը, Մայր Աթոռի դիվանապետ Հոգեշնորհ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը, ինչպես նաև Կառավարության առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ տիար Ռազմիկ Մարկոսյանը և ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Անրի Կյունին:

Օդանավակայանի հյուրասրահում մտերմիկ զրույց ծավալվեց Վեհափառ Հայրապետի և Կարդինալի միջև, որից հետո Կարդինալն իր այցի նպատակների մասին հարցազրույց տվեց «Շողակաթ» հեռուստաընկերությանը՝ ի մասնավորի ասելով. «Հայոց Հայրապետները՝ երջանկահիշատակ Վազգեն Ա-ն, Գարեգին Ա-ն ու Նորին Սրբություն Գարեգին Բ-ն այցելել են Լիոն: Այս այցելությունը վաղուց էր ծրագրված: Իմ սերը Հայաստանի նկատմամբ մեծ է: Ես 30 տարի ցանկացել եմ լինել այս պատմական հողում...»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ հյուրերն ուղևորվեցին Մայր Աթոռ: Ս. Էջմիածնի միաբանությունը Տրդատա Կամարի մոտ դիմավորեց Նորին Սրբությանը և մեծարգո հյուրերին: Հոգևորականաց թափորն ապա զանգերի ղողանջների ներքո ուղղվեց Մայր Տաճար, ուր, Իջման Ս. Սեղանի առջև, Վեհափառ Հայրապետն աղոթք վերառաքեց առ Աստված, որից հետո ողջունեց և Մայր Աթոռի միաբանությանը ներկայացրեց իրեն ընկերակցող բարձրաստիճան եկեղեցական հյուրերին: Բարիգալստյան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը Հայաստան եկած հոգևորականների հետ եկեղեցականաց թափորով շարժվեց Վեհարան:

Մայիսի 27-ի առավոտյան բարձրաստիճան հյուրերը, ուղեկցությամբ Գերաշնորհ Տ. Դավիթ արքեպս. Սահակյանի, Տ. Նորվան եպս. Ջաքարյանի և Մայր Աթոռի միաբան-

ների, այցելեցին Ծիծեռնակաբերդ՝ հարգանքի տուրք մատուցելու 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Պատվիրակությանն ուղեկցելու էր եկել նաև ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Նորին Գերազանցություն Անրի Կյունին: Կարդինալին և իրեն ուղեկցող շքախմբի անդամներին դիմավորեց Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Լավրիենտի Բարսեղյանը՝ հանգամանալից ներկայացնելով անցյալ դարասկզբին հայ ժողովրդի դեմ կատարված ոճրագործությունը: Ծաղկեպսակի զետեղումից հետո կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ Հայոց Մեծ եղեռնի բյուրավոր անմեղ նահատակների:

Հավարտ հոգեհանգստյան արարողության Կարդինալը ծառ տնկեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի տարածքում, այնուհետև հարցազրույց տվեց «Ծողակաթ» հեռուստաընկերությանը՝ ասելով. «Խաղաղության խորհուրդը կրող այս տունկը պիտի հաստատի երկու ժողովուրդների բարեկամությունը»:

Ծիծեռնակաբերդից հետո պատվիրակությունն այցելեց Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան: Այստեղ պահվող հայկական ձեռագրերը հյուրերին ներկայացրեց Մատենադարանի տնօրեն Սեն Արնշատյանը: Քանի որ Լիոնի արքեպիսկոպոսն առաջնորդն է պատմական Լուգդունիայի, ուստի ի պատիվ Կարդինալի ցույց տրվեց քրիստոնեության երկրորդ դարի հայրերից Իրենեոս Լուգդունացու 13-րդ դարում ընդօրինակված մի ձեռագիր:

Կարդինալն իր տպավորությունների մասին գրեց Մատենադարանի պատվո հյուրերի մատյանում, իսկ տնօրեն տիար Սեն Արնշատյանը պատվարժան հյուրերին նվիրեց Մատենադարանի մասին պատմող հրատարակություններ:

Նույն օրը, հետ միջօրեի, պատվիրակությունն այցելեց Երևանի Ֆրանսիական համալսարան և հանդիպում ունեցավ համալսարանականների հետ: Համալսարանի ռեկտոր տիար Պոլ Ռուսեյի ողջույնի և բարիգալստյան խոսքից հետո, դեսպան Նորին Գերազանցություն Անրի Կյունին ներկայացրեց Կարդինալին ու նրան ուղեկցող շքախմբի անդամներին և սիրով հրավիրեց Կարդինալին իր օրհնության խոսքը փոխանցելու համալսարանականներին:

Լիոնի արքեպիսկոպոսն ասաց, որ Կարդինալ է ձեռնադրվել Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքում, որը հայկական մեծ համայնք ունի, և որ Լիոնում նույնպես բազմաթիվ հայեր են բնակվում: Կարդինալն առանձնակիորեն հիշատակեց, որ տարիներ առաջ պատիվն է ունեցել իր թեմում հյուրընկալելու Ամենայն Հայոց Կաթողիկոս, Նորին Սրբություն Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին, և որ Նորին Սրբության հրավերով այսօր ինքն է հյուրընկալվել Մայր Աթոռում:

Արևմտյան Եվրոպայի Լիոնի շրջանի Հայրապետական պատվիրակի փոխանորդ Գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյանն այնուհետև պատմեց ֆրանսահայ գաղութի ներկա վիճակի մասին:

Ֆրանսիական համալսարանից հետո բարձրաստիճան հյուրերն այցելեցին ԵՊՀ-ի Աստվածաբանության ֆակուլտետ՝ հանդիպելու համալսարանականների հետ: Գերաշնորհ Նորվան Սրբազանը համալսարանականներին և դասախոսական կազմին ներկայացրեց պատվիրակության անդամներին: Կարդինալին և շքախմբի անդամներին դեկան Գերա-

շնորհ Տ. Շահե արքեպս. Աճեմյանի, դասախոսական կազմի և ուսանողության անունից ողջունեց և բարի գալուստ մաղթեց ֆակուլտետի դասախոս Մարի Սանթուրջյանը:

Կարդինալը, հյուրընկալության համար շնորհակալական խոսքից հետո, ուսանողությանը դասախոսություն կարդաց 2-րդ դարի եկեղեցական մեծ հայրերից Իրենեոս Լուգդունացու մասին: Դասախոսությունից հետո Կարդինալը սիրով պատասխանեց համալսարանականներին հետաքրքրող հարցերին:

Հավարտ հանդիպման բարձրաստիճան հյուրը համալսարանի գրադարանին նվիրեց ֆրանսերեն լեզվով մի քանի գրքույկներ:

Նույն օրը, ժամը 18.00-ին, բարձրաստիճան հյուրերը, նրանց ուղեկցող եկեղեցականաց դասը ազգիս Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ այցելեցին և հանդիսավոր թափորով մուտք գործեցին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի՝ խոնարհվելու Ս. Գրիգոր Լուսավորչի սրբազան մասունքներին և համատեղ աղոթելու: Այնուհետև այցելեցին Երևանի Սուրբ Երրորդություն կիսակառույց եկեղեցի, ինչպես նաև Արարատյան Հայրապետական թեմի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի, ուր Նորին Սրբությանը և հյուրերին դիմավորեց և ողջունեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը:

Այնուհետև պատվիրակությունն այցելեց Երևանի ֆրանսիական լիցեյ, ուր նրանց միացավ նաև դեսպան Նորին Գերազանցություն Անրի Կյունին: Լիցեյի տնօրենուհին ողջունեց պատվարժան հյուրերին և ներկայացրեց լիցեյի գործունեությունը, իսկ ուսանողները ներկայացրեցին նորաձևության դասընթացում իրենց ձեռք բերած վարպետությունը:

Նույն օրը, երեկոյան, բարձրաստիճան հյուրերը հյուրընկալվեցին Ֆրանսիայի Հանրապետության դեսպանատանը, ուր ի պատիվ Կարդինալի կազմակերպվել էր ընթրիք՝ ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Նորին Գերազանցություն Անրի Կյունիի կողմից:

Մայիսի 28-ին պատվիրակությունը հոգևորական դասի ուղեկցությամբ հյուրընկալվեց Շիրակի թեմում: Ս. Յոթվերք առաջնորդանիստ եկեղեցու սրբազան կամարների ներքո բարձրաստիճան հյուրերին դիմավորելու էին հավաքվել եկեղեցականաց դասը՝ ի գլուխ ունենալով Շիրակի թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանին, հավատավոր հայորդիներ և տեղական հեռուստաընկերությունների ներկայացուցիչներ: Եկեղեցական թափորն այստեղ բուրվառների անուշահոտ խնկարկումով և եկեղեցու զանգերի ղողանջների ներքո առաջնորդվեց եկեղեցի, ուր, առ Աստված աղոթք վերառաքելուց հետո, Կարդինալը և թեմական առաջնորդ Սրբազան Հայրը բարիգալստյան ողջույնի խոսքեր փոխանակեցին:

Այնուհետև հյուրերն այցելեցին առաջնորդարան, ուր ի պատիվ Կարդինալի կազմակերպվել էր մի փոքրիկ հյուրասիրություն, հընթացս որի ծավալվեց մտերմիկ զրույց առաջնորդ Սրբազան Հոր և հյուրերի միջև:

Առաջնորդարանից բարձրաստիճան հյուրերն ուղևորվեցին դեկտեմբերյան երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան՝ զետեղելով ծաղկեպսակ: Կարդինալը հոգեհանգստյան աղոթք բարձրացրեց առ Աստված՝ անմեղ զոհերի հոգիների հանգստության համար:

Նույն օրը, կեսօրին, Կարդինալը և իրեն ուղեկից շքախմբի անդամները հանդիպում ունեցան Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի Հայ Կաթոլիկների առաջնորդ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Տեր-Ներսիսյանի հետ: Առաջնորդարանում երգչախմբի գեղարվեստական կատարումներից հետո Կարդինալը և առաջնորդ Սրբազան Հայրը բարիգալստյան ողջույնի խոսքեր փոխանակեցին: Այնուհետև հյուրերն այցելեցին Գյումրիի Ֆրանսիական լիցեյ, ուր նրանց միացավ նաև Ֆրանսիայի Հանրապետության դեսպան Նորին Գերազանցությունը Անրի Կյունին՝ տիկնոջ ուղեկցությամբ: Լիցեյի ուսանողությունը ֆրանսերենով կատարված մի բեմականացմամբ պատվեց մեծարգո հյուրերին: Նորին Գերազանցությունը ներկաներին ներկայացրեց Կարդինալին և հրավիրեց բեմ՝ իր խոսքերն ու տպավորությունները փոխանցելու:

Այնուհետև հյուրերն ուղևորվեցին Կարիտասի Գյումրիում գտնվող Հայաստանի բաժանմունք, ուր նրանց դիմավորեց և ողջույնի խոսք ուղղեց կազմակերպության պատասխանատու Հայր Անտոն Ծ. վրդ. Թոթոնջյանը: Հայր Սուրբը հյուրերին ծանոթացրեց Հայաստանում Կարիտասի ծավալած գործունեությանը:

Նույն օրը, հետմիջօրեի, Կարդինալը, իրեն ուղեկից շքախմբի անդամներով, այցելեց Գյումրիի 1998 թ. «Ռոպեր Պողոսյան և որդիք» հիմնադրամի կողմից հիմնադրված «Տիրամայր Հայաստանի» Պողոսյան կրթական համալիր: Բարձրաստիճան հյուրերին ուղեկից էր նաև դեսպան Նորին Գերազանցություն Անրի Կյունին: Սաները Պողոսյան կրթական համալիրի պատասխանատու քույր Արուսյակ Սաքոնյանի գլխավորությամբ ավանդական աղ ու հացով դիմավորեցին պատվարժան հյուրերին: Ողջույնի խոսքով հանդես եկավ քույր Արուսյակ Սաքոնյանը և սիրով հրավիրեց Կարդինալին՝ իր օրհնությունը բաշխելու սաներին: Ի պատիվ բարձրաստիճան հյուրերի, «Տիրամայր Հայաստանի» Պողոսյան կրթական համալիրում կազմակերպվել էր ճաշկերույթ: Ճաշկերույթը համեմվեց սաների կողմից պատրաստված գեղարվեստական մասով: Հյուրերը մեծապես տպավորվեցին մանուկների գեղեցիկ կատարումներով: Հեռանալուց առաջ Կարդինալը գրքույկներ նվիրեց կրթական համալիրի գրադարանին, իսկ սաները փոխադարձաբար հյուրերին նվիրեցին իրենց իսկ կողմից ձայնագրված ձայնասկավառակներ:

Այստեղից հյուրերն ուղևորվեցին Աշոցք՝ այցելելով «Տիրամայր Նարեկի» իտալական հիվանդանոց: Հյուրերին դիմավորելու էր դուրս եկել հիվանդանոցի բուժանձնակազմը՝ գլխավոր բժիշկ Սարգիս Վարդանյանի և հիվանդանոցի հոգևոր հովիվ Հայր Մարիոյի գլխավորությամբ: Կարդինալը և Նորվան Սրբազանը մեկ առ մեկ այցելեցին հիվանդներին՝ իրենց օրհնությունը բաշխելով նրանց: Կարդինալն այցելեց հիվանդանոցի մատուռ, ուր Նորվան Սրբազանի հետ համատեղ աղոթք բարձրացրեց հիվանդների շուտափույթ ապաքինման համար:

Նույն օրը, երեկոյան, Կարդինալը և ուղեկից շքախումբն այցելեց Արթիկի շրջանի Փանիկ գյուղ և իր մասնակցությունը բերեց Կաթոլիկ եկեղեցում մատուցվող Սրբազան Պատարագին: Պատարագիչ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Տեր-Ներսիսյանը հայ կաթոլիկ համայնքին ներկայացրեց Կարդինալին և սիրով հրավիրեց քարոզելու: Հավարտ Պատարագի ի պատիվ բարձրաստիճան հյուրերի տրվեց ընթրիք:

Հաջորդ օրը, մայիսի 30-ի առավոտյան, պատվիրակությունն այցելեց Ս. Գեղարդավանք: Հյուրերին դիմավորեց և ողջունեց Ս. Գեղարդավանքի վանահայր Հոգեշնորհ

Տ. Ղևոնդ աբդ. Ղևոնդյանը: Հայր Սուրբը պատվարժան հյուրերին հանգամանալից կերպով ներկայացրեց Ս. Գեղարդավանքի պատմությունը, որից հետո սիրով հրավիրեց մասնակցելու մի փոքրիկ հյուրասիրության: Մեկնելուց առաջ Կարդինալը և իրեն ուղեկից շքախմբի անդամներն աղոթք բարձրացրեցին առ Աստված:

Նույն օրը, կեսօրին, բարձրաստիճան հյուրերն այցելեցին Սևանա կղզի՝ հանդիպելու Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սանուց հետ: Հյուրերին դիմավորեց և բարի գալուստ մաղթեց դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Գարեգին աբդ. Հարությունյանը, իսկ դպրեվանքի ուսանողությունը ի պատիվ հյուրերի հանդես եկավ գեղարվեստական հայտագրով: Կարդինալը նախ շնորհակալություն հայտնեց հյուրընկալության համար, որից հետո ուսանողության համար դասախոսություն կարդաց Ս. Իրենեոսի մասին: Կարդինալը սիրով պատասխանեց սաներին հետաքրքրող հարցերին: Տեսուչ Հայր Սուրբը հակիրճ ներկայացրեց Սևանի հնամենի վանքի, ինչպես նաև դպրանոցի հիմնադրման պատմությունը: Ավարտելով իր այցը Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց՝ պատվիրակությունը վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Նույն օրը, երեկոյան, Վեհարանից ազգիս Վեհափառ Հայրապետ Գարեգին Բ-ի առաջնորդությամբ Կարդինալը, իրեն ուղեկից շքախմբի անդամները և բարձրաստիճան եկեղեցականաց դասը թափորով շարժվեցին Մայր Տաճար, ուր Նորին Սրբության բարձր հանդիսապետությամբ անցկացվեց կիրակնամտի երեկոյան ժամերգություն: Հավարտ երեկոյան ժամերգության Գերաշնորհ Տ. Դավիթ արքեպս. Սահակյանը հրավիրեց Կարդինալին իր օրհնության խոսքը փոխանցելու հավատացյալներին:

Երեկոյան ժամերգությունից հետո պատվիրակությունն այցելեց Գևորգյան Հոգևոր Ճեմարան: Հանուն ուսանողության, պրոֆեսորադասախոսական կազմի և տեսչության բարձրաստիճան հյուրերին ողջունեց Ճեմարանի տեսուչ Արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանը: Գերաշնորհ Տ. Նորվան եպս. Ջաքարյանն ուսանողությանը ներկայացրեց պատվիրակության անդամներին և հրավիրեց Կարդինալին՝ իր խոսքն ուղղելու ճեմարանականներին: Կարդինալն ուսանողության համար հանդես եկավ իր կողմից պատրաստված Ս. Իրենեոս Լուգդունացու մասին դասախոսությամբ: Դասախոսության ավարտին Կարդինալը սիրով պատասխանեց ուսանողությանը հետաքրքրող հարցերին: Հավարտ հանդիպման Կարդինալը մի քանի գրքեր նվիրեց Ճեմարանի գրադարանին:

Մայիսի 30-ի առավոտյան Ս. Հռիփսիմե Տաճարում Պատարագ մատուցեց Կարդինալը, որին ներկա էր Ֆրանսիայի Հանրապետության դեսպան Նորին Գերազանցություն Անրի Կյունին:

Նույն օրը, ժամը 11-ին, Հոգեգալստյան տոնին, հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց Մայր Տաճարում: Սրբազան արարողությանը ներկա էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հնգօրյա այցով Մայր Աթոռում գտնվող Լիոնի արքեպիսկոպոս Ֆիլիպ կարդինալ Բարբարենի գլխավորած պատվիրակությունը: Հավարտ Սրբազան Պատարագի Հայոց Հայրապետը ողջունեց բարձրաստիճան հյուրերի ներկայությունը Մայր Աթոռում և Կարդինալին նվիրեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ականակուռ լանջախաչ: Այնուհետև հրավիրեց Կարդինալին իր խոսքը փոխանցելու Մայր Տաճարում հավաքված բազմաթիվ հավատացյալ հայորդիներին:

ԿԱՐԴԻՆԱԼ ԲԱՐԲԱՐԵՆԻ ԽՈՍՔԸ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Այս տարի բոլոր քրիստոնյաները շնորհն ունեցան Ս. Զատիկը նշելու միևնույն օրը: 50-րդ օրը՝ Զատկից 7 շաբաթ հետո, Պատարագն ազդարարում է «Հանդիսավոր ցնծություն», և Հոգեգալուստն իր շուրջն է համախմբում մեզ բոլորիս: Կրակե լեզուների տեսքով խորհրդանշվող Սուրբ Հոգու շնորհը հեռու է վանում Առաքյալներին ջլատող վախը, և նրանց լեզուներն արձակվում են կապանքներից: Հորդում է Ս. Զատիկը, լույսով է ողողվում Երուսաղեմ քաղաքը, իսկ այսօր՝համայն աշխարհը:

Քրիստոս հայտնում է Սուրբ Հոգու պարգևի մասին՝Հուդայի (ոչ Իսկարիովտացի) հարցին պատասխանելով (Հովհ. ԺԴ): Տերը մի գեղեցիկ ժպիտ է մեզ պարգևում, քանի որ Ս. Հուդան այն ավետաբերն է, որին Սուրբ Հոգին բերում է Հայաստան, և որը ձեր երկրում Հարուցյալ Քրիստոսի առաջին վկայողն է եղել (Կարդինալը նկատի ունի Թադեոս առաքյալին՝խմբ.):

Առաքյալը հարցնում է Քրիստոսին. *«Տե՛ր, ինչպե՞ս եղավ, որ քեզ պիտի հայտնես մեզ, և ոչ թե աշխարհին»* (Հովհ. ԺԴ 22): Հոգեգալստյանը Սուրբ Հոգին Քրիստոսի տված պատասխանը ամբողջովին հասկանալի դարձրեց. Վերնատանը ընտրեց իր վկաներին, որ քարոզեն աշխարհով մեկ: Ս. Հուդան հասկանում է, որ ինքն էլ Քրիստոսի պես ուղարկված է Հոր կողմից, և հետևելով իր Տիրոջ օրինակին՝ գնում է Ավետիսը հասցնելու բոլոր մարդկանց:

Թովմասի հարցը՝ *«Տե՛ր, չգիտենք՝ ուր ես գնում, ուրեմն ինչպե՞ս կարող ենք գիտենալ ճանապարհը»* (Հովհ. ԺԴ 5), և Փիլիպոսի խնդրանքը՝ *«Տե՛ր, Հորը մեզ ցույց տուր, և այդ բավական է մեզ»* (Հովհ. ԺԴ 8), նույնքան հատկանշական են, որքան Հուդայինը: Միրավի, այս երեք հարցերը 14-րդ գլխի հիմքն են կազմում՝ ներկայանալով իբրև մի հոյակապ կատեխիզիս: Միսուս դա հաստատում է Թովմասին տված պատասխանով. *«Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը»* (Հովհ. ԺԴ 6): Փիլիպոսի հարցին պատասխանելով՝ նա վեր է հանում Իր հաղորդությունը Հոր հետ, որ Նրան ուղարկել է. *«Ով ինձ տեսավ, Հորը տեսավ»* (Հովհ. ԺԴ 9): Այնուհետև նա հստակ ներկայացնում է աշակերտների առաքելությունն աշխարհի վրա:

Քրիստոսի խոսքերն այնքա՜ն բարի են. *«Այդ օրը դուք պիտի իմանաք, որ ես Իմ Հոր մեջ եմ, իսկ դուք՝Իմ մեջ. ու ես՝ձեր մեջ... Ով Ինձ սիրում է, պիտի սիրվի Հորից. ես էլ Նրան պիտի սիրեմ և Ինձ պիտի հայտնեմ Նրան»* (Հովհ. ԺԴ 20-21): Հաղորդության մթնոլորտն այնքան զորեղ էր, որ ապշեցնում է Առաքյալներին: Այն ժամանակ Հուդային, իբրև ուղղամիտ մարդու, հուզում է մի հարց, որ բովանդակում է քնքշություն, յուրայինի հանդեպ կարեկցանք, Առաքյալներին խոստացված շնորհը կիսելու ցանկություն: Նրա ուղղած հարցը, ինչպես Թովմասինն ու Փիլիպոսինը, դեռ հուսախաբ է անելու Քրիստոսին. *«Տե՛ր, ինչպե՞ս եղավ, որ Քեզ պիտի հայտնես մեզ և ոչ թե աշխարհին»* (Հովհ. ԺԴ 22): Իսկ Ավետարանի հաջորդող շարադրանքը տալիս է այդ հարցի պատասխանը:

Այո՛, պարգևն անսահման մեծ է : Հիսուս խոստանում է հետևյալը.

Սեր. *«Եթե մեկը սիրում է ինձ... իմ Հայրը նրան կսիրի»* (ԺԴ 23):

Հավատարմություն, կատարել պատվիրաններն ու խոսքը. *«...նա կպահի իմ խոսքը...»* (ԺԴ 23):

Սուրբ Հոգու պարգևը, որ նախ Մխիթարիչ է կոչվում, ապա արտահայտվում *«օթևան»* բառով, որ Հայրն ու Որդին գալիս են բնակվելու մեր մեջ:

Սակայն նման չքնաղ պարգևը նախատեսված չէ սրացողի անձնական բավականության համար: Հաղորդությունը երբեք տարանջատված չէ առաքելությունից: Սա իրողություն է դառնում Տիրոջ կյանքի միջոցով, քանզի Մարդեղությունից ի վեր Սերը ասրվածատուր պարգև է: Այն նաև իրողություն է դառնում այն բոլոր մարդկանց առաքելությամբ, որոնց Հայրը սիրում է, և որոնց տրված է Սուրբ Հոգին:

Բնակվելով մեր ներսում՝ Հոգին կլինի գործուն: Այն Քրիստոսի գործն ավարտին կհասցնի, մեզ կուսուցանի ամեն բան ու կհիշեցնի այն ամենն, ինչ Քրիստոսն ասել է մեզ (հմմտ. ԺԴ 26): Տպավորիչ են կրկնվող *«ամեն»* բառերը: Տերն ուսուցանում է մեզ, որ մեզ ասվող խոսքը ոչ թե իրենից է բխում, այլ իր Հորից: Եվ Սուրբ Հոգին պարզ կդարձնի մեզ, որ Քրիստոսի կյանքի բոլոր պահերը՝ իր հրաշքներն ու առակները, իր անցած չարչարանաց ճանապարհը, այն ամենը, որ նա արել է այս աշխարհում, Հորից ստացած առաքելության կատարումն է եղել:

Հուդան դեռ չէր հասկացել: Նա սխալվում էր՝ կարծելով, թե Հիսուս, որ այդքան անմնացորդ կերպով հանդես էր գալիս իր աշակերտներին Սուրբ Հոգու շնորհով, թաքնված է մնալու աշխարհից: Ընդհակառակը, երբ Սուրբ Հոգին մեզ դարձնի իսկական քրիստոնյաներ, մենք կկիսենք մեր Տիրոջ առաքելական փառքը: Եթե մենք իսկական օթևաններ ենք Աստծո բնակության համար, ուրեմն աշխարհը կարող է տեսնել Քրիստոսին առաքյալների կերպարանքով: Կարելի է շարունակել Քրիստոսի տված պատասխանը Փիլիպոսին և ասել Հուդային, ինչպես նաև մեր ժամանակաշրջանի բոլոր քրիստոնյաներին, *«Ով ձեզ կտեսնի, Քրիստոսին կտեսնի»*:

Ահա մեր առաքելությունը, ահա մի գեղեցիկ ծրագիր Հոգեզալստյան տոնի առիթով: Թո՛ղ Աստված գա և բնակություն հաստատի մեր մեջ, թո՛ղ Սուրբ Հոգին գործի յուրաքանչյուր քրիստոնյայի ներսում, ինչպես Քրիստոսը երևան եկավ աշխարհում: Միայն մի նախապայման է առաջադրվում, միաժամանակ հիմնարար և սպառնացող, որպեսզի ընդունվի պարգևը և ներս թափանցի շունչը հոգեզալստյան. *«Եթե ինձ սիրեք... Եթե մեկն ինձ սիրի»*:

Ողորմած լինենք այդ սիրո հանդեպ, քանի որ այդ շնորհը մեզ խոստացված է, և որ հատկապես աշխարհն ունի դրա կարիքը: *«Որպեսզի աշխարհը գիտենա, որ ես սիրում եմ Հորը»* (31), սա է հրամայականը: Բայց այն աշխարհը, ուր Աստված մեզ ուղարկում է, ողողված է անտարբերությամբ ու ատելությամբ թագավորվող բռնություններով ու մահի իշխանությամբ... Հիսուս մեզ *«թողնում է խաղաղությունը»* որպես մի միսիա, որ դեռ պետք է իրագործել այս աշխարհում: Եվ որպեսզի հուսահատությունը մեզ չհաղթահարի, որպեսզի մենք մեր ներսում ամրակուռ մնանք, նա բաշխում է մեզ *«իր խաղաղությունը»*: Նրա ներկայությունը հիմքն ու հենարանը կլինեն մեր ուրախության, մեր կենսու-

նակության և վճռականության՝ գտնվելու մարդկանց մեջ. մարդիկ, որ կլինեն *«խաղաղության ջատագովներ»*, մարդիկ, որ կոչված են լինելու Աստծո զավակներ:

Նա մեզ վստահեցնում է, որ այս աշխարհի «իշխանի» դեմ հաղթանակն արդեն շահած է, իսկ խաղաղության գործը դեռ անխոնջ կերպով պահանջում է ամենօրյա վերսկսում ու ամրապնդում: Ահա այս տառապալի, բայց հաղթահարելի բախման մեջ է, որ Սուրբ Հոգին դրվում է մեզ որպես Միխթարիչ, այնպես, ինչպես որ մեկը կողքիդ կանգնած է լինում քեզ խորհուրդ տալու, սատար կանգնելու, պատսպարելու և սփոփելու համար: Խոստումը հիասքանչ է. *«Եվ ես պիտի աղաչեմ Հորը, և Նա մի այլ Միխթարիչ պիտի տա ձեզ, որպեսզի հավիտյան ձեզ հետ բնակվի»* (16):

Արևելքի Եկեղեցում հաճախ Սուրբ Հոգուն անվանում են «Աստծո զորություն»: Գեղեցիկ սրուգաբանություն. սա ցույց է տալիս այն ներգործությունը, որ ունի մարդու ներաշխարհի վրա: Նույնիսկ երբ մոռանում ենք Աստվածային խորհուրդը, հավատում ենք, որ Հոգին սիրո ներքին այդ զորությունն է, որ իրականացնում է Երրորդության միասնությունը:

Սուրբ Հոգուն ուղղված Պատարագի աղոթքները գլխավորապես սկսվում են «Արի» խոսքով: Դրանք մեր ներքին էությունը բացահայտող կանչ են «Տիրոջը, որ մեզ կյանք է շնորհում»: Կարելի է թվարկել պարգևներն ու պտուղները: Մնում է միայն դրանք ցանկանալ, ինչպես չորացած հողն է սպասում և ընդունում կենարար ջրին:

Ուրեմն լիարժեքորեն ճաշակենք այս տոնախնդությունը: Խնդրենք Սուրբ Հոգուն, որ մեզ ամենքիս բաշխի անհրաժեշտ շնորհներ և միավորի մեզ բոլորիս: Խնդրենք Նրան՝ բոլոր նրանց հետ միասին, ովքեր այսօր փառաբանում են Նրա գալուստը Քրիստոսի միակ Եկեղեցի:

Նույն օրը Մայր Աթոռի միաբանական սեղանատանը, ի պատիվ բարձրաստիճան հյուրերի, կազմակերպվեց հյուրասիրություն և ընդունելություն:

Մայիսի 31-ի առավոտյան պատվիրակությունը եղավ Խոր Վիրապի վանքում, ուր նրանց դիմավորեց վանքի վանահայր Հոգեշնորհ Տ. Զարեհ վրդ. Կաբաղյանը: Հայր Սուրբը հանգամանալից ներկայացրեց հնամենի վանքի պատմությունը, որից հետո Կարդինալն աղոթք վերառաքեց առ Աստված՝ հայցելով Ս. Գրիգոր Լուսավորչի բարեխոսությունը:

Նույն օրը, կեսօրին, ավարտելով հնգօրյա այցը Մայր Աթոռ, Լիոնի Կարդինալ Ֆիլիպ Բարբարենի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Հայաստանից:

ՎԱՉԳԵՆ ՍՐԿ. ՔԵՍԱԲԼՅԱՆ
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին